VEOLIA
Ջուր

ՀՈՒՆԻՍ 2024

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ 3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում 3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում 7
1.3. Ջրահեռացման համակարգ 8
1.4 Կեղտաջրերի մաքրում և հեռացում 9
1.5 Էներգահամակարգ 9

2. Առևտրային տնօրինություն 10
2.1. Բաժանորդների տվյալներ 10
2.2. Հաստույթ 11
2.3. Գանձում 12
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ 12
2.5. Ջրաչափեր 13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում 14

3. Տեխնիկական տնօրինություն 15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն 15
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում 16
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ 18
3.4. Ջրատար համակարգի բարելավում 18
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն 19
3.6. 1-85 թեժ գիծ 21

4. Լրատվական ծառայություն 22

5. Որակի, առողջության և անվտանգության բաժին 24
5.1. Դասընթացներ/սեմինարներ 24
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում 26
5.3 Քլորի տարողությունների՝ կոնտեյների և բալոնի գազազերծման (դեգազացիայի) փչամաքրման, տեխնիկական վկայագրման և ներկման աշխատանքներ 27
5.4. Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտներ 28
5.5. համագործակցություն ՀՀ ՆԳ նախարարության և ՀՀ Մարզպետարանների հետ 28
5.6. Վեոլիա գրուպի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ միջև կնքված առողջության և անվտանգության պայմանագիր 28

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Վեղիա Ընկերության սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես.

Գյուղ Ջրաձոր

- Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ Ղազանչի 2 D-600մմ թուջե ջրատարում նկատվել է ջրաքանակի զգալի կորուստ, ինչը հանգեցրել էր ջրամատակարարման ցանցում ճնշման անկման: Ջրատարի տարբեր հատվածներում ուսումնասիրություններ կատարելով, հայտնաբերվեց վթարված հատվածը՝ տնտեսելով Q = 80 լ/վ ջրաքանակ:

Գյուղ Մարմաշեն

- Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց Մարմաշեն գյուղը սնուցող D=80մմ պողպատե ջրագիծը, որը անցնում է գյուղի վարելահողերի միջով և ուներ մի քանի վթարված հատվածներ: Ներսրսկման միջոցով փոխարինվեց L=40մ հատված D=40մմ ՊԷ ջրագծով՝ խնայելով Q=1,5 լ/վ ջրաքանակ:

Գյուղ Հայրավանք

Գավառ տեղամասի աշխատակիցների հետ Հայրավանք համայնքի 1-ին փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 2 գաղտնի վթար D = 90մմ ՊԷ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q = 8լ/վ ջրաքանակ:

Քաղաք Հրազդան

Հրազդան քաղաքում վթարաորոնողական աշխատանքներ կատարելու ընթացքում «Հայ Ֆիդայիներ» փողոցին հարակից դաշտերում D = 500 մմ պողպատե ջրատարի վրա հայտնաբերվեց վթար և 1 ապօրինի միացում՝ որից սնվում էին մոտակա անասնախմոցները: Արդյունքում տնտեսվեց Q = 1լ/վ ջրաքանակ:

Քաղսի գյուղի տարածքում, Սևան-Երևան ավտոմայրուղու տակ՝ «Միլենիում» գազալցակայանի հարևանությամբ հայտնաբերվեց վթար D = 150մմ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

Հացառատ-Լճաշեն ջրատարի վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում «Նոյ լենդ» հանգստյան գոտու հարևանությամբ անցնող D = 500մմ պողպատե ջրատարից հայտնաբերվեց անհայտ միացում՝ Q = 2լ/վ ջրաքանակով:

Քաղաք Արարատ



Արարատ տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար՝ Խանջյան 56 հասցեի հարևանությամբ անցնող D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:

Քաղաք Երևան

Հյուսիս տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Ավան, Աճառյան 44 շենքի նկուղում D = 80մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 11լ/վ ջրաքանակ:





Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Խանջյան 5 հասցեի (Մանկավարժական համալսարան) դիմաց, դիտահորի մեջ, D = 250մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 15լ/վ ջրաքանակ:

Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Նալբանդյան 46 հասցեի հարևանությամբ անցնող D = 50մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 8լ/վ ջրաքանակ:



Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Զորավար Անդրանիկի 105 շենքի հարևանությամբ անցնող D=250մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 4լ/վ ջրաքանակ:

Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Այգեձոր 60 տան հարևանությամբ անցնող D = 100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3,5լ/վ ջրաքանակ:

Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Հայրիկ Մուրադյան 33 տան հարևանությամբ անցնող D = 100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3,5լ/վ ջրաքանակ:

Գեղարքունիքի մարզ

«Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են Կոտայքի մարզի Զրառատ համայքի d=500մմ L=82գծմ պողպատե խողովակի շահագործումից հանման, d=50մմ L=82գծմ պէթ խողովակի մոնտաժման և d=32մմ ճնշման կարգավորման փականի տեղադրման աշխատանքներ:

Արարատի մարզ

«Մասիս» ենթատեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Արարատի մարզի Նոր Խարբերդ 27, 28, 29 փողոցներում վերակառուցվել են d=20-90մմ L=1415գծմ ջրագծեր, տեղադրվել է թվով 38 ջրաչափական դիտահոր, տեղադրվել և վերատեղադրվել է թվով 14 d=15մմ նոր ջրաչափ, թվով 15 կցաշուրթային և բրոնզե փական, թվով 1 ե/բ դիտահոր՝ իրենց ծածկերով 1200x1200մմ: Շահագործումից հանվել են d=219-273մմ L=600գծմ վթարային վիճակում գտնվող թուջե ջրագծեր: Կատարված աշխատանքների արդյունքում Արարատի մարզի Նոր Խարբերդ բնակավայրի թիվ 27, 28, 29 փողոցներում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 4լ/վ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում: Ինչպես նաև գ. Մարմարաշեն թիվ 14-րդ փողոցում վերակառուցվել են d=20-75մմ, L=280գծմ ջրագծեր, տեղադրվել է թվով 13 ջրաչափական դիտահոր, տեղադրվել և վերատեղադրվել է թվով 37 d=15մմ նոր ջրաչափ, թվով 2 d=80-100մմ կցաշուրթային փական, թվով 56 d=15մմ հետադարձ փական, տեղադրվել է թվով 2 ե/բ դիտահոր՝ իրենց ծածկերով 1200x1200մմ: Շահագործումից հանվել են d=50մմ L=280գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծեր: Կատարված աշխատանքների արդյունքում Արարատի մարզի գ. Մարմարաշեն թիվ 14-րդ փողոցում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարում, տնտեսվել է մոտ 1լ/վ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Արագածոտնի մարզ

«Աշտարակ» տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզի Գիտավան 1 թաղամասում իրականացվել են ջրագծերի վերակառուցման աշխատանքներ: Վերակառուցվել են L=1100գծմ պէթ ջրագծեր, տեղադրվել է թվով 1 ճնշման կարգավորիչ փական, թվով 1 փականային հանգույց, գլխամասային ջրաչափ:

Կատարված աշխատանքների արդյունքում Արագածոտնի մարզի Գիտավան 1 թաղամասում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, ջրի ծախսը 11 լ/վ-ից նվազել է 1,5լ/վ, ինչի արդյունքում վերացել է մոտ 9 լ/վ կուրուստ:

Արմավիրի մարզ

«Էջմիածին» ենթատեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք բնակավայրն ամբողջությամբ և Մուսալեռ բնակավայրի մի հատվածն արդեն ունեն կանոնավոր և բարձր ճնշմամբ ջրամատակարարում: Երկու բնակավայրերի համար կառուցվել է d=250մմ L=3620գծմ ջրագիծ, միացումներն արդեն իսկ տրված են, բնակավայրերի 750 բաժանորդ ջուրը ստանում է նոր խողովաշարերով, որը նույնիսկ ամենաբարձրադիր հատվածներում առանց պոմպի ապահովում է 1 մթն ճնշում, որը լիովին բավարար է շուրջօրյա կանոնավոր ջրամատակարարում ունենալու համար:

«Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից Ակնալիճ համայնքի Գառնիկյան թաղամասում փոխարինվել է d=50մմ L=285գծմ պողպատյա խիստ վթարային վիճակում գտնվող ջրագիծը՝ d=63մմ պէթ խողովակով: Նոր ջրագծից միացվել է թվով 4 բազմաբնակարան շենքերի մուտքագծեր՝ թվով 96 բնակարան, ինչպես նաև թվով 4 առանձնատների ջրաչափական դիտահորերը դուրս են բերվել սահմանազատման կետեր, պողպատյա մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե խողովակներով: Ջրագծի փոխարինման արդյունքում տնտեսվել է 1,5-2լ/վ ջուր, վերոնշյալ բազմաբնակարան շենքերում կարգավորվել է ջրի ճնշումը:

Ջրահեռացման համակարգ

«Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Նորք 11փ 63 հասցեում կառուցվել է d=200մմ L= 36գծ/մ երկարությամբ կոյուղագիծ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:

Հունիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1275
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	25958
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	26085
Հոսակորուստի որոնում կորելյատորով	մ	1700
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4703.5
Կառուցված ջրագիծ	մ	11933.5
Կառուցված կոյուղագիծ	մ	843
Վերացված գաղտնի վթարներ	հատ	10
Փոխարինված փական	հատ	641
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	470
Մաքրված դիտահոր	հատ	2108
Գաղտնի վթաների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	6
Վերացված վթարներ	*Չափման միավոր*	*Քանակ*
Ջրամատակարարման ցանցում	հատ	1180
Ջրահեռացման ցանցում	հատ	1353
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1063	821	1809

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										
	15	20	25	30	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	204	1	1	0	1	1	0	0	0	0	208
Փոխարինված	506	7	5	0	3	3	5	1	0	0	530
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	215	5	0	0	3	1	1	2	0	0	227
Ընդամենը	925	13	6	0	7	5	6	3	0	0	965

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 965 ջրաչափ: Կատարված աշխատանքների 96%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	տեղ	գծ/մ
1	Արաբկիր	2120	283	12
2	Քանաքեռ-Զեյթուն	0	227	0
3	Մաշտոց	440	219	180
4	Շահումյան	0	176	3
5	Շիրակ	1900	459	21
6	Արթիկ	110	88	0
7	Ապարան	0	46	12
8	Ալավերդի	2430	27	36
9	Աշոցք	0	8	0
10	Բերդ	1880	20	0
11	Իջևան	0	48	0
12	Լոռի	0	225	6
13	Նոյեմբերյան	55	16	30
14	Սպիտակ	0	12	0
15	Ստեփանավան	2435	29	0
16	Թալին	0	16	15
17	Տաշիր	0	14	0
18	Չարենցավան	0	105	0
19	Աբովյան	0	99	18
20	Հրազդան	0	77	42
21	Կենտրոն	150	214	36
22	Հյուսիս	110	258	61
23	Հարավ	0	294	6
24	Էրեբունի	0	119	12
25	Արմավիր	0	119	2
26	Արտաշատ	0	121	0
27	Էջմիածին	0	154	0
28	Աշտարակ	2160	44	49
29	Արարատ	0	67	0
30	Մասիս	0	44	0
31	Գավառ	380	30	3
32	Սևան	1440	67	0
33	Մարտունի	0	40	48
34	Վարդենիս	410	15	167
35	Ճամբարակ	55	26	0
36	Դիլիջան	0	73	82
37	Վայք	635	14	0
38	Եղեգնաձոր	0	24	0
39	Ջերմուկ	130	43	0
40	Սիսիան	0	19	6
41	Գորիս	0	46	12
42	Կապան	1076	85	80
43	Մեղրի	660	51	10
	Ընդամենը	18576	4161	949

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում հայտնաբերվեց օդամուղի խափանում: Ստուգման ընթացքում պարզվեց, որ պատճառը շարժիչի այրումն էր: Շարժիչը վերանորոգման նպատակով տեղափոխվեց արտադրամաս: Վերանորոգումից հետո օդամուղը տեղադրվեց իր տեղը և այժմ աշխատում է բնականոն ընթացքով:
- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի մանր ճաղավանդակի քերիչ սանրերն ամբողջությամբ փաթաթվել էին աղբով, ինչը խոչընդոտում էր ճաղավանդակի բնականոն մաքրմանը: Արդյունքում քերիչ սանրերը ապամոնտաժվեցին և մաքրվեցին: Այժմ սարքավորումներն աշխատում են անխափան:
- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում ջրհեղեղի պատճառով ամբողջ կայանը հեղեղվեց, որի արդյունքում հեղեղաջրերի հզոր հոսքը իր հետ բերեց հսկայական քանակությամբ տիղմ և խճաքարեր, որոնք պատեցին կայանի ամբողջ տարածքը, ներառյալ սարքավորումները և շենքը: Ինտենսիվ մաքրման և վերականգնման աշխատանքների շնորհիվ, հաջողվեց կայանը վերադարձնել սարքին վիճակի՝ մաքրելով բոլոր սարքավորումները և շենքը:
- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում շարքից դուրս էր եկել ֆազային պաշտպանիչ ռելեն, որի պատճառով պոմպակայանը դադարել էր աշխատել: Վերջինս փոխարինվեց նորով և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով: Մաքրվեցին նաև հակադարձ փականները, որի աղտոտվածության պատճառով նվազել էր պոմպերի արտադրողականությունը:
- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Հ/հ	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	57,323	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	76802	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	155,127	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	6,589	5.4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	0	0
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	20,657	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,564	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,900	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	7,400	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	1,684	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 422 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 412 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.07.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 623,546 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2024թ. հունիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	679,108	593,411	87,4
	Իրավաբանական անձ	33,240	30,105	90,6

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	751,538	605,439	80,6
	Իրավաբանական անձ	38,760	28,046	72,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:
Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 889 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում անսարք ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակագ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը, հնարավորության դեպքում, միացվում են Լոկատոր համակարգին՝ ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:
Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:
Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունիսս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5471 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2024
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2948	1918	490	5356
	Իրավաբանական անձ	70	42	3	115
	Ընդամենը	3018	1960	493	5471

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունիս ամսին փոխարինված 5471 ջրաչափերի մոտ 45 %-ը (կամ 2453 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:
Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:
Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 219,859 մ^3 հասույթ:
Ստորև՝ գրաֆիկական տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հունսի ամսին, նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ, գանձումը կազմել է 2,537 մլն. դրամ (98 %):
Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:
Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:
Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը:
Հունիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 206 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 24.5 մլն դրամ ընդհանուր գումարով:
Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2024թթ. ընթացիկ որոշներ		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
32,576	4,436,761,064	20,140	2,324,336,257	1,065	257,653,022	12,436	2,112,424,807	12,252	1,458,186,184

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 62 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.07.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,826	2,847
Բնակիչ-բաժանորդներ	8,285	1,927
Իրավաբանական անձեր	3,541	920

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 423.8 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2024 թ.դեբիտորական պարտքերի շարժը / մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	722,860	604,497	82.63	37,754	28,037	74.26
	Առանց ջրաչափի	28,678	942	3.28	1,006	9	0.89

Տվյալների բազայում 01.07.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	894,042	378,211	42.30	41,009	6,565	16.01

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6462 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 711 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2489	2049	81.9
գ.Պռոշյան	1724	1134	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6035	1975	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:
Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 20669, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 18515, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 5035, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5834, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2909, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5243 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8512 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	371	214,860	39,527,876

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հունիս ամսվա շարունակականության տվյալները, որը կազմում է 94.5%, ինչը 2.1%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:
Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
0	1											
2022	96.4%	96.5%	97.1%	97.1%	97.0%	96.8%	96.6%	96.9%	97.1%	96.8%	96.7%	96.5%
2023	96.6%	96.5%	96.8%	96.8%	96.7%	96.6%	96.3%	96.3%	96.6%	96.8%	96.7%	96.5%
2024	96.4%	96.3%	96.3%	96.2%	94.9%	94.5%						

Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 80 ՃԿՓ:
Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.









Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի հունիս ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 123լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսն ավելացել է 448 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Մեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Երևան - ջրարտադ. պ/կ-ներ (հազ.կվտ)- 2023թ.	1046	1068	1217	1293	2243	3775	4961	5120	2924	1398	1209	1161
Երևան - ջրարտադ. պ/կ-ներ (հազ.կվտ)- 2024թ.	1060	1052	1178	1469	1852	4223						
Երևան - ինքնահոս ջրաքանակ (լ/վ)- 2023թ.	5200	5151	5122	5056	4937	4906	4871	4985	5101	5182	5068	5012
Երևան - ինքնահոս ջրաքանակ (լ/վ)- 2024թ.	4950	5003	4935	4914	4836	4783						

3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էնեգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 13173 կՎտ/ժ (2.94%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 13 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 13 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 4647 կՎտ/ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ կավելանար 8526կՎտ/ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	544,944	464,284	504,438	449,351	453,844	451,393	492,966	492,856	453,688	461,341	474,992	508,770
2023	518,813	472,624	531,594	447,638	450,529	448,404	486,562	506,247	462,387	466,606	462,952	516,505
2024	517,370	478,389	491,463	456,513	456,098	461,578						

Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 142 էլ. հաշվիչ: Ջնջվել է 6 նոր ընդունվող պոմպակայան, Միասնիկյան պոմպակայանում ներքին հաշվառման էլ. հաշվիչը փոխարինվել է: Կազմակերպվել են երեք նոր հոսքաչափերի էլ. սնուցման աշխատանքները: Դիլիջան քաղաքի «Վարչական շենք» հասցեում հայտնաբերվել է 4044 կվտ/ժ հավելագրում, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է 2,729,687 ՀՀ դրամ (առանձ ԱԱՀ): Կատարվել է էլ. Էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 49 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 37 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:
Թվով 422 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 412 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

- Հաշվետու ամսում չորս հասցեներում տեղադրվել է ինվերտորային համակարգ.
- Շինարարների 15 (Ma-83)
- Ղանդիլյան 28դ (Shir-75)
- Ֆրունզե 8/1 18 (She-110)
- Կարբի խ/h (Asht-2)

Ինվերտորային պոմպի տեղադրում

- Հաշվետու ամսում չորս հասցեներում տեղադրվել է ինվերտորային պոմպ.
- Բագրատունյաց 25/27 (She-82)
- Չեխովի 56 (She-22)
- Արտաշիսյան 86 (She-120)
- Ազատության 3/1 (Ar-87)

Տեղադրված ընդհանուր 142 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 129,799 կՎտ/ժ-ով՝ 18%-ով:



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2022	551,402	412,532	433,545	578,070	584,232	710,686	742,244	703,582	703,291	646,604	529,358	549,669
2023	581,183	575,745	593,723	600,304	660,724	730,069	760,431	782,541	711,097	600,926	567,011	532,802
2024	531,006	525,528	562,491	553,462	551,326	600,270	0	0	0	0	0	0

Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 46 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

2024թ. հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 434 374 կՎտ/ժամ (11,13%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	1110.0	947.1	950.6	1324.0	1552.0	4093.0	4995.0	4767.0	3055.0	1579.0	1001.0	871.0
2023	1090.0	1107.0	1188.0	1310.0	2331.0	3903.0	5168.0	5379.0	3010.0	1441.0	1247.0	1212.0
2024	1,097	1,079	1,222	1,528	1,906	4,338						

Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսը նվազել է 113 470 ԿՎտ/ժ/ամիս կամ 4,81%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	2,200.00	1,768.40	1,810.60	1,811.30	1,862.40	2,171.90	2,952.70	3,133.90	2,454.50	1,944.80	1,636.40	1,708.00
2023	1,820.60	1,698.50	1,789.10	1,669.80	2,000.30	2,360.90	2,868.60	3,163.80	2,485.60	2,096.50	1,862.20	1,860.20
2024	1,850.40	1,688.50	1,796.50	1,977.60	1,837.70	2,247.50						

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

- Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է 624 420 ԿՎտ/ժամ 11,27%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են հունիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	*Չ/Մ*	*Քանակ*
Մարզային ջրագծերի ամբողջական տարանջատում՝ ըստ ջրատարերի, ջրագծերի, միացումների	տարանջատում	1
Ստեղծվել է բաժանորդ կետերի և ջրագծերի անհայտ միացումների նախնական տեղաբաշխում ըստ ամենամոտիկ ջրագծերի	տեղաբաշխում	1
Կատարվել նախնական DMA, Pressure zone տարանջատում Երևան քաղաքում հիմք ընդունելով «ԱՏՀ» տվյալները	քաղաք Երևան	1
Տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ՝ տարածքում առկա կոմունիկացիաներով, որը մուտքագրվում է փաստաթղթաշրջանառություն: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 225 գործի թվայնացում՝ 459 բաժանորդ	բաժանորդ	459
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 2849 կմ	կմ	2849
«ԱՏՀ»-ում առկա մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 9700 կմ	կմ	9700
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը կազմում է 1858 կմ	կմ	1858
«ԱՏՀ»-ում առկա մարզային կոյուղու երկարությունը կազմում է 1866 կմ	կմ	1866
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	1
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	281
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդ կետերի ուղղում	կետ	1456
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդ կետերի ուղղում	կետ	4

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գառնի-Երևան ջրատարի վրա՝ Նուբարաշենի ձորում հայտնաբերվել է վթար 10լ/վ մեծությամբ, որը վերացվել է ՇՏ աշխատակիցների կողմից:

Արին-Բերդ-Խարբերդ ջրատարի վրա հայտնաբերվել է վթար 15լ/վ մեծությամբ, որը վերացվել է ՇՏ կողմից:

Օրեր անց նույն ջրատարի վրա կրկին առաջացել է վթար 50լ/վ մեծությամբ: Վթարը վերացվել է:

Արզնի 2 ջրատարի վրա «Կարգավորման» բաժնի աշխատակցիների ահազանգից հետո հայտնաբերվեց վթար, որի պատճառով ջուրը քաղաք չէր հասնում: Անմիջապես կատարվեցին ջրատարի ջրազրկման աշխատանքներ և ջրատարը մեկուսացվեց քաղաքին կապող ճյուղից:

Հաշվետու ամսում կատարվել են նաև ջրաքանակների չափումներ և կարգավորումներ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Ջրառ» ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Քաղաք Մասիս, Արարատյան 1/2 քլորակայանում նորոգվել է հեղուկ քլորի համակարգ մտնող ճնշումային հում ջրի փսասված ջրագիծը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



- Քաղաք Մասիս, Արարատյան 3/4 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար հեղուկ քլորի տրման փսասված ինժեկցիոն մղիչները փոխարինվել են նորերով:

- Քաղաք Իջևան, Գետահովիտ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգ մտնող ջրագծի վրայի խափանված փականը փոխարինվել է նորով:



- Քաղաք Եղեգնաձոր, Գետափ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի փսասված քլորագիծը:

- Քաղաք Սևան, Լճաշեն քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած, հնամաշ «ալդոս» փականը փոխարինվել է նորով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

- Քաղաք Երևան, Ծարավ Աղբյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով՝ մասնավոր կազմակերպության կողմից վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի անսարք գազ դետեկտորը:

■ Վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի քլորագծի վրա գտնվող ինժեկտորը:



■ Քաղաք Երևան, Զորաղբյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով նորոգվել է հեղուկ քլորի համակարգի բաժանարար հանգույցի վրայի «ալդոս» փականը:

■ Քաղաք Երևան, Ավան-Առինջ տեղամասում հետագա շահագործման նպատակով վերանորոգվել է պահեստային վակուում կարգավորիչը:



■ Քաղաք Լոռի, Ծովասար քլորակայանում հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչը վերանորոգվել է՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

■ Քաղաք Եղեգնաձոր, Քառասուն Աղբյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը, և շարքից դուրս եկած պոմպը փոխարինվել է նորով:

■ «Ապարան-Երևան» ջրատարի վրա կատարվել են հոսքաչափի տեղադրման աշխատանքներ:

■ Սաղմոսավան-Աշտարակ» ջրատարի վրա տեղադրվել է 400մմ-ոց գծային փական:

■ Քաղաք Իջևան, Քարքարուտ քլորակայանում փոխարինվել է 500գծ/մ, 25մմ-ոց պոլիէթիլենային քլորի տրման խողովակաշարը:

■ Տաշիր տեղամասի Նովոսելցովո քլորակայանում փոխարինվել է քլորաջրի տրման համակարգը՝ 80գծ/մ 25մմ պ/Է:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

■ Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 54514 հեռախոսազանգ: Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11804 զանգ, որից Երևան քաղաքինը՝ եղել է 9260 զանգ (78.4%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2544 զանգ (21.6%):

■ Շահագործման բնույթի զանգերի քանակը կազմել է 42710 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 30229 զանգ (70.8%), իսկ մարզերինը՝ 12481 զանգ (29.2%):





185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2023 Հունիս	2024 Հունիս	
Առևտրային	Ընդամենը	**12566**	**11804**	-6.06%
	Երևան	9568	9260	-3.22%
	Մարզեր	2998	2544	-15.14%
Շահագործում	Շահագործում	33874	42710	26.08%
	Երևան	25395	30229	19.04%
	Արաբկիր	3841	7180	86.93%
	Քանաքեռ-Զեյթուն	2339	2820	20.56%
	Մաշտոց	3122	3598	15.25%
	Շահումյան	5191	2748	-47.06%
	Շենգավիթ	2793	4062	45.44%
	Կենտրոն	2824	3613	27.94%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	2834	2776	-2.05%
	Էրեբունի	2451	3432	40.02%
	այդ թվում կոյուղու վթար	168	178	5.95%
	այդ թվում դիտահորի խցանում	4727	4037	-14.60%
	ՄԱՐԶԵՐ	8479	12481	47.20%
	Հարավ	4736	7243	52.93%
	Հյուսիս	3743	5238	39.94%
	այդ թվում կոյուղու վթար	35	406	1060.00%
	այդ թվում դիտահորի խցանում	2825	2401	-15.01%

■ 2023թ. հունիս ամսվա համեմատ՝ 2024թ հունիս ամսին 6,06%-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 26,08%-ով:

■ 2023թ. հունիսի համեմատ՝ 2024թ հունիս ամսին 46%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 63%-ով ավելացել է հայտարարությունների լսումս ավտոմատ ծառայության միջոցով, իսկ 17%-ով նվազել է 5 րոպեից ավել զանգերի քանակը:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

■ 2023թ. հունիսի համեմատ՝ 2024թ. հունիս ամսին 49,74%-ով ավելացել է ջրամատակարարման զանգերի քանակը:

■ 2023թ. հունիսի համեմատ՝ 2024թ հունիս ամսին, ավելացել է հետզանգով սպասարկված զանգերի քանակը 41%-ով: 2023թ. հունիս ամսին կատարվել է 34080 հետզանգ, իսկ հաշվետու ամսվա ընթացքում՝ 48022 հետզանգ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամռան առաջին ամսում «Վեոլիա ջուր» ընկերության համակարգում շարունակվեցին այն բոլոր շինարարական աշխատանքները, որոնք դեռ մեկնարկել էին գարնանը: Այս տարի ընկերությունը դեռ վաղ գարնանն էր սկսել թե Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով, թե շահագործման տեղամասերի ուժերով շինարարական մեծածավալ աշխատանքները: Իսկ Հանրային կապերի ծառայությունը հենց այդ ժամանակվանից էլ իրականացրել է այդ աշխատանքների լուսաբանումը թե հեռուստաալիքների, թե ընկերության ֆեյսբուքյան էջի միջոցով:





Եվ այսպես, հունիս ամսին Ֆրի նյուզ հեռուստաալիքով և ընկերության ֆեյսբուքյան էջով լուսաբանվել են ՊԿԱԾ 2024-ով Առինջ համայնքում ընկերության սկսած շինարարական աշխատանքների 2-րդ փուլը, որով կառուցվող 9 կմ ջրագծով հնարավոր կլինի տնտեսել վայրկյանում 20 լիտր ջուր և ապահովել համայնքի Պարույր Սևակ և Աբովյան թաղամասերում կանոնավոր ջրամատակարարում:

Մեծածավալ էին նաև Երևանի Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն, Ավան, Կենտրոն վարչական շրջանների 9 փողոցներում մեկնարկած կոյուղագծերի վերակառուցման աշխատանքները: Ֆրի նյուզ հեռուստալիքի, ինչպես նաև ընկերության ֆեյսբուքյան էջի միջոցով ներկայացնելով աշխատանքների ընթացքը ևս մեկ անգամ խոսվեց կոյուղին ըստ նպատակի օգտագործելու մասին՝ նշելով, որ միայն այդ դեպքում կոյուղին կլինի լիարժեք աշխատանքային:

Շատ էին նաև շահագործման տեղամասերի ուժերով իրականացվող աշխատանքների լուսաբանումը: Թե հեռուստաընկերությամբ, թե ընկերության յութուբյան, կայքէջի և ֆեյսբուքյան էջերի միջոցով լուսաբանվեց Չարենցավան քաղաքի Շահումյան, Մարտունի քաղաքի Գետափնյա, Ծաղկաձոր քաղաքի Պահլավունյաց փողոցների, Բաղրամյան համայնքի Այգեգործական թաղամասի 7 փողոցների ջրագծերի կառուցումը: Արմավիրի մարզի Պտղունք և Մուսալեռ բնակավայրերում կառուցելով 3700 գծամետր ջրագիծ Վեոլիաթիմը լուծեց տարիների ջրամատակարարման խնդիրը: Լուսաբանվեց, որ Կապան քաղաքի Հունան Ավետիսյան և Մինաս Պապյան փողոցների 1700 բաժանորդ արդեն ջուր են ստանում նոր ջրագծով: Իսկ ահա Վարդենիս քաղաքում նորացվեցին Երիտասարդության փողոցի 14 և 16 շենքերի կոյուղագծերը:

Ամսվա ուրախալի լուրը Եղվարդի Երևանյան փողոցի տարիների պատմություն ունեցող ջրի խնդրի լուծումն էր: Այդպիսի արդյունք՝ կանոնավոր և բարձր ճնշմամբ ջրամատակարարում այս փողոցի բաժանորդները երբեք չէին ունեցել:

Քիչ չէին գաղտնի վթարների վերացման աշխատանքները, որոնց արդյունքում մեծ ջրաքանակ տնտեսվեց Հայրավանքում, Օշականում և այլուր: Որպես այս թեմայի ամփոփում հրապարակվեց Հանրային կապերի

ծառայության կողմից նկարահանված գաղտնի վթարի պատմություն ֆիլմը, որի միջոցով ևս մեկ անգամ սպառողներին բացատրվեց, թե որն է գաղտնի վթարը, ինչպես է այն հայտնաբերվում և վերացվում:
Ամսվա խոշոր վթարներ էին «Ղազանչի 2» ջրատարի վթարը, որին Հանրային կապերի ծառայությունը անդրադարձավ 2 անգամ: Իսկ ամսվա վերջում Կորեայի ձորում վթարվեց «Արզնի 2» ջրատարը՝ 400 լիտր ջրակորստով: Վեոլիաթիմը աշխատեց գիշեր-ցերեկ և 36 ժամ հետո կարողացավ վերականգնել Արաբկիր վարչական շրջանի ջրամատակարարումը: Հանրային կապերի ծառայությունը այդ ընթացքում հրապարակումներով, լրագրողների հետ առանձին աշխատանքներով կարողացավ մեղմել դեպի ընկերություն մղվող բացասական ալիքը:

Հաշվետու հունիս ամսին շարունակվեցին Լոռու և Տավուշի մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին աղետի պատճառած վնասների գույքագրման, հայտնաբերման և վերացման աշխատանքները: Աղետի գոտում Վեոլիաթիմի իրականացրած աշխատանքներին պարբերաբար պատկան մարմիններից հնչել են շնորհակալական և գովեստի խոսքեր, որոնք տեղադրվել են ընկերության ֆեյսբուքյան էջում:
Ամռանը, երբ ջրի աճող պահանջարկը բավարարելու համար «Վեոլիա Ջուր» ընկերության համակարգն աշխատում է գերլարված, գործարկված են բոլոր պոմպակայանները, ամեն ինչ արվում է սպառողների կանոնավոր ջրամատակարարումն ապահովելու համար, այնուամենայնիվ կան հազարավոր սպառողներ, որոնց կատարած խախտումները զգալի վնաս են պատճառում թե՛ ընկերությանը, թե՛ օրինապաշտ բաժանորդներին: Խոսքը ապօրինի ջրօգտագործողների մասին է, որոնք շարունակում են ջրագողությամբ զբաղվել: Հանրային կապերի ծառայությունը այս թեմայով կատարած մի քանի հրապարակումներով ցույց է տալիս, որ շոգ եղանակին ջրի սպառման ծավալների ավելացմանը զուգահեռ ջրամատակարարման գրաֆիկի խախտումների պատճառը մեծ մասամբ հենց այս ապօրինություններն են:
Հունիս ամսին շատ են եղել հրապարակումներ ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, վթարային ու պլանային ջրանջատումների մասին:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի երկրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով՝ երկրորդ եռամսյակի ընթացքում Ընկերության Հյուսիս և Հարավ Շահագործման տնօրինություններում շահագործման տեղամասերի պետերի կողմից իրականացվեցին Վեոլիա Գրուպի Կյանքը փրկող կանոնների վերաբերյալ հանդիպում/քննարկումներ՝ թվով 285 աշխատակցի հետ:

- ՈԱԱ բաժինը (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ), ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև Հայաստանի հանրապետության Տեխնիկական կանոնակարգերի և Արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 454-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով, «Որակավորում եռակցողների. Պողպատի եռակցում հալումով ՄԱՍ 1» ստանդարտի պահանջներով, ինչպես նաև Վեոլիա Գրուպի Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներով, Ընկերության Տեխնիկական, Հյուսիս, Հարավ և Երևան շահագործման տնօրինությունների թվով 7 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած դասընթացները և գիտելիքների ստուգումը:
- «Էլեկտրազազաեռակցման աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջներ թեմայով դասընթաց և գիտելիքների ստուգում»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջներ,
- Կյանքը փրկող կանոններ թեմաներով դասընթացները:

- ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 25 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած դասընթացները և գիտելիքների ստուգումը
- «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորում և գիտելիքների ստուգում»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթացները:

- ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 13 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած դասընթացները և գիտելիքների ստուգումը.
- «Քլորակայանի պատասխանատու անձի մասնագիտական որակավորում և գիտելիքների ստուգում»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթացները:

2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ



5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 3 քլորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

■ ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 58 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՔԼՈՐԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԵՎ ԲԱԼՈՆԻ ԳԱԶԱԶԵՐԾՄԱՆ (ԴԵԳԱԶԱՑԻԱՅԻ) ՓՉԱՄԱՔՐՄԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Հաշվետու ժամանակահատվածում, ՈԱԱ բաժինը, ՏՏ Ջրառ ծառայության հետ համատեղ, կազմակերպել է հեղուկ քլորի տարողությունների՝ թվով 10 կոնտեյների և թվով 32 բալոնի տեխնիկական վկայագրման աշխատանքներ, որը իր մեջ ներառում է ստորև ներկայացվող աշխատանքները.

- Քլորի տարողության գազազերծման (դեգազացիա) և փչամաքրման աշխատանքներ
- Քլորի տարողության արտաքին ակնադիտական զննում,
- Քլորի տարողության ներքին լապարասկոպիկ զննում,
- Քլորի տարողության մետաղի հաստության որոշում,
- Քլորի տարողության մետաղի կարծրության որոշում,
- Քլորի տարողության փորձարկային ճնշումով պնևմատիկ փորձարկում,
- Քլորի տարողության փականային արմատուրների, կցաշուրթերի, սիֆոնների ստուգում,
- Քլորի տարողության կիպության փորձարկում աշխատանքային ճնշման տակ,
- Քլորի տարողության ներկման աշխատանքներ:



5.4. ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՊԻ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

- Հաշվետու ամսում իրականացվել է Վեոլիա Գրուպի «Փոսորակների և խրամուղիների» նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ:

5.5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

- Համաձայն ՆԳ նախարարության փրկարար ծառայության տնօրեն, ներքին գործերի նախարարի տեղակալի գրության, ՈԱԱ բաժինը, «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասի հետ համատեղ մասնակցեց «Ուժեղ երկրաշարժի դեպքում Շիրակի մարզում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնավարժությանը:

5.6. ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՊԻ ԵՎ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի առաջին կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, Ընկերության ղեկավար անձնակազմի կողմից՝ եռամսյակը մեկ անգամ, Ընկերության հիդրոտեխնիկական կառուցվածքներում, Վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վայրերում, Վարչական շենքերում և Ընկերության այլ տարածքներում անհրաժեշտ է իրականացնել անվտանգության ստուգայցեր և ստուգայցերի վերաբերյալ ներկայացնել զեկույցներ՝ արձանագրված թերությունների շտկման/վերացման նպատակով:

Երկրորդ եռամսյակի համար սահմանված ստուգայց/զեկույցները իրականացվել են 100 տոկոսով:

- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի երկրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, Շահագործման տեղամասերի պետերի կողմից՝ Վեոլիա Գրուպի Կյանք փրկող կանոնների վերաբերյալ, Շահագործման տեղամասերի աշխատողների հետ 2024 թվականի ընթացքում, եռամսյակը մեկ անգամ անհրաժեշտ է անցկացնել հանդիպում/քննարկում և քննարկված կանոնների շրջանակում աշխատակիցներին ներկայացված հրահանգների, ցուցումների և քննարկված հարցերի վերաբերյալ ներյայացնել զեկույց:

Երկրորդ եռամսյակի համար սահմանված զեկույցները իրականացվել են 100 տոկոսով:

- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի երրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, Ընկերությունը 2024 թվականի ընթացքում պետք է իրականացնի նոր խմբագրության թվով 5 ԲՌԿ ստանդարտի ինքնագնահատման աշխատանքներ:

Աշխատանքներն իրականցվում են ըստ սահմանված ժամանակացույցի:

- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի չորրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, ՈԱԱ բաժնի և ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից 2024 թվականի ընթացքում պետք է արձանագրեն թվով 100 գրեթե պատահար և Hi Po:

Երկրորդ եռամսյակի համար սահմանված գրեթե պատահարի և Hi Po-ների արձանագրումո իրականացվել է 100 տոկոսով:

VEOLIA
Ջուր

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am